



## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6/2-Ա

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

**Ք.Երևան**  
**Ժ.11.00**

**15 նոյեմբերի 2011թ.**

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 49 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Ս. Մարգարյանը:

Երևանի ավագանու արտահերթ նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետի խորհրդականները, քաղաքապետի մամլո քարտուղարը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետը, քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետը, վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Ս. Մարգարյանը հրապարակեց Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 10-ի հ.85-Ա որոշումը՝ համաձայն որի Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցության» խմբակցության ընտրական ցուցակից ավագանու անդամ է ընտրվել Գեորգի Ֆելիքսի Գաբրիելյանը:

#### **ՕՐԱԿԱՐԳ**

1. Երևանի քաղաքապետի արտահերթ ընտրություն:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Դ. Դումանյանը և «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գ. Գասպարյանը:

Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության ղեկավար Դ. Դումանյանը խմբակցության կողմից առաջադրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար, Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Տարոն Մարգարյանի թեկնածությունը:

Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գ.Գասպարյանը հայտարարեց, որ ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 15-ի արտահերթ ընտրություններում թեկնածու չի առաջադրում և պաշտպանում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար, Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Տարոն Մարգարյանի թեկնածությունը:

**Ժամը 12<sup>00</sup>-12<sup>30</sup> փակ գաղտնի քվեարկություն.**

Քվեարկության արդյունքները՝

**Տարոն Մարգարյան**

Կողմ՝ 49

Դեմ՝ 0

**Երևանի քաղաքապետ է ընտրվել Տարոն Մարգարյանը:**

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ Երևանի քաղաքապետն իր լիազորությունները կստանան 2011 թվականի նոյեմբերի 18-ին, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում Երևանի բնակիչներին տրված երդմամբ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,  
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**